տի կարողանայ տիեզերքի հոգերանը դառնալ:

* * *

Ես չեմ տեսել Արարատեան դաշտից աւելի լուսաւոր դաշտ:

Այստեղ լոյսը, ինչպէս Արեւմուտքում, թափառող պատահականութիւն չէ, ամպերի միջից վայր ընկած ճառագայթների փունջ կամ ստուերների հակադրական՝ ռեմբրանդեան պայքար, այլ խաղաղօրէն սփռուած, բիւրեղեայ մի պարտէզի համայնատարած կայծկլըտում:

Դաշտ եւ լոյս՝ մի են: Երբ գիւղացին հերկում է, նա իր բահի հարուածով դուրս է նետում հողի հետ նաեւ լոյսի մի կոյտ:

Ու Արարատը լուսաւորութիւնը կանոնաւորող մեծ հայելի է նմանում: Նա իր պայծառութիւնը հեռաւոր լեռներից է առնում՝ Հիմալայից, եւ ճերմակ փարոսի նման պտըտելով, հորիզոնների բոցը եւ ոսկին մաղում է ամպերի մէջ ու սփռում այստեղ:

Արեւմտեան մարդը, լոյսը ըմբռնում է, ինչպէս երազ, անդորրութիւն, բախտ: Նա ապրում է փոթորկալից ամպերի տակ, որի դէմ կառուցել է ստուերների ոճը՝ գոթական եկեղեցին: Նրա հոգին անհանդիստ է, տուայտող, շարշարուող մտքի դանակների տակ արիւնած: Նրա միտքը զննող է եւ միեւնոյն ժամանակ յոռետես: Նա իրապաշտ է. լոյսի բացակայութեան պատճառով նա ուզում է արժէքաւորել ստուերը, անկանոն շուքերի խաղը: Նա ապրում է տպաւորութիւններով, անցողակի եւ փոփոխական զգացումների անհանդիստ պայքարների պահանջի տակ:

Այստեղ՝ մարդը ապրում է լոյսի հետ միացած: Արեւը մարմին է, ամենօրեայ հաց: Ու հացը իր կրօնական պաշտամունքին միացնում է դհօլ ու զուրնան:

Մեր ճարտարապետութիւնը արտաքին դունաւորման պահանջ չունի: Պարսկական մզկիթի գմբեթը զարդարուած է գոյնզգոյն նկարներով: Բիւզանդական եկեղեցին, մանաւանդ իր ռուսական ձեւի մէջ ոսկիներով է ծածկուած: Հայ տաճարը մերկ է եւ ամբողջական: Արարատի գագաթի նման նա լոյս է եւ երաժշտութիւն:

Այսօր ես ըմբռնեցի մեր հին տաղերի հիմնական ոճը, մեր ճարտարապետութեան եւ մեր հաւատքի ոգեղինացած կառուցուածքը, մեր կարպետների ժուժկալ գունաւորումը եւ մեր լեզուի չարժուն հնչականութիւնը:

Եւ հասկացայ նաեւ, որ Նարեկացին այստեղ չէ ծնած:

Նա հայ հոգու միւս երեսն է:

* * *

Քայլերիս տակ դաշտը խուլօրէն տրոփում է: Ինչպի՜սի մերկացած մեծութիւն: Ձեռքերը կրծքին դրած, պառկել է մի հսկայ եւ ականջ է դնում տարածութիւնների մէջ սփռուած տիեզերքին:

Ոչ մի առասպելի զանգակը չի հնչում այստեղ: Եթէ հնչէ իսկ՝ չի լսուիր: Ինքը դաշտը լուսաւոր ձայների մի երգ է, անլսելի, բայց ակնյայտ մի զօղանջում: Հնչուն բառերով լեցուն, աստուածաշնչական մի հսկայ էջ է, որի վրայ Արարատի գագաթը մաղ է ածում իր վառ աչքերը:

Այս հողի վրայ պէտք է մաղ դալ ոտարոտի՛կ:

Թոնարհ ձեռքերով պէտք է վերցնել նրա բոյսերը ու սիրել պարզ սիրտով:

Պէտք է գտնել հիմնական հնչականութիւնը, լսել սկիզբնատիպ ձայնը եւ լուսաւորութեան մէջ լռել:

Կան երկրագնդի վրայ ճակատագրական վայրեր, որոնք կոչուած են, պատմութեան որոշ վայրկեաններին, մարդկութեան այլակերպութեան նպաստել:

Մեզ, հայերիս, տիեզերքի մէջ, տարօրինակ դեր է վիճակուած: Մի դեր, որ կատարում ենք, բայց անգիտակցում: Պատմութիւնը դեռ մութ է: Նրա գիրքը կողպուած է եօթը բանալիով: Նրա նպատակը անյայտ է, եւ, սակայն, մշուշների միջից ճառագայթներ են երեւում, որոնք պէտք է մեզ լրջօրէն մտածել տան:

Արարատեան դաշտը օրրան է: Արարատը կենտրոն եւ նախակէտ: Նրա գագաթը, հայ եկեղեցու գմբեթի հետ, քայլեց աշխարհի վերայից, անցաւ Փոքր Ասիան, մաղլցեց Դանուբը, կանգ առաւ Իտալիայում, գնաց Գերմանիա, Շուեդիա, Նորվեգիա, Ֆրանսա, բարձրացաւ մինչեւ Անգլիա, մինչեւ Իրլանդա:

Այստեղ Հնդկաստանը, Բիւզանդիոնը եւ Արեւմուտքը կանգ են առնում, գրկախառնը-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան